

– Ինչպիսի ժամանակ է, Յովնան, որ բերանդ գինի դրած չունեիր:

– Զսանեօթ տարի, Տիրուհիս:

– Խեղճ Յովնան, ամեն բանե ինքզինքդ զրկեր էիր:

– Ի՛նչ էր իմ զրկանքս, երբ զթեզ միտքս բերեի՝ դու Բագրատունեաց Օրիորդ, ոսկեծեղուն պալատներուն մէջ ծնած, ինձի համար դատապարտուած, ես խեղճ լեռնցի՝ ամեն տեսակ խիստ կեանքի ընտանի էի ի ծննդէնէ, ինձ համար հաւասար էր արդէն ջուրն ու գինին, մանաւանդ որ միտքս դրեր էի անդին՝ արքայութեան մէջ խմել երկնային գինին. բայց աստուած արքայութեան երկնային գինուոյն ճաշակն այսօր ինձ տուաւ. երկրպագու եմ իւր շնորհաց եւ իւր հրեշտակին: Բայց դու ուստի՞ իմացար, Տիրուհիս, թէ ես գինի չեմ խմեր:

– Արդէն գիտեի, բայց անցեալ երեկոյ, երբ իշխանաց հետ եկած էիր ընթերելու, տեսայ զթեզ այս դռնէն եւ քու ամեն շարժումներդ:

Գինին թեպէտ բաժակ մը՝ բայց Վասկանուշի շրթունքներն հպեալ եւ նորա ձեռքէն՝ համարձակութիւն եւ զուարթութիւն տվին Յովնան ու տխրութիւնը հալածեցաւ իւր ճակտէն, աչքերն իրենց բնական փայլն առին, բայց փոխանակ սովորական հրոյն՝ քաղցր լոյս կը ցոլար. կնոջ մը դիւրիչ զօրութեան ազդեցութիւնն էր, որ այդ հզօր պղնձէ եակը մոմի պէս կակղցնելով, առիւծէ ի գառն կը փոխարկեր: Հիմա ծիծաղը հեգնութիւն չէր իւր երեսին վրայ, այլ սրտին կերպարանքն էր, որուն դառնութիւնը արտասուաց հեղեղը լուացել ու մաքրել էր:

Այդ ճաշը երկայն տեւեց, եւ երկու անձիսք իրենց այնչափ տարուան քաշածները, զգացածները, ըրածները պատմեցին իրարու, երբեմն հեշտ արտասուք, երբեմն ծիծաղ փոփոխակի կը փայլէին իրենց երեսին վրայ, մինչեւ որ Վասկանուշ իր լուրջ կերպարանքն առաւ եւ ելաւ սեղանէն, էլ ժամ էր բաժանման. երբ մտան դարձեալ առջի ընդարձակ սենեակը հարցուց.